ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << ԴԱՀԿ-ՇՀԾՁԲ-15/9-17/1 >>

ք. Երևան **<< 25>> ապրիլի 2017թ.**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայությունն, ի դեմս << գլխավոր հարկադիր կատարողի ժամանակավոր պաշտոնակատար **Արմեն Հարությունյանի**, (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, **Ա/Ձ Անուշ Պետրոսյանը, ի դեմս Անուշ Պետրոսյանի** (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների»** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը ընդունվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության **2(երկու)** օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը **2(երկու)** (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10(տաս) աշխատանքօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է **9000000(ինը միլիոն) ՀՀ դրամ**: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան **25.12.2017թ.**:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը, բայց ոչ ուշ քան **25.12.2017թ.**:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ

հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է **4(չորս)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայություն	Ա/Ձ Անուշ Պետրոսյան
Ք. Երևան, Հալաբյան 41/ա	Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 5
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011288025	Հ/Հ՝ 1570004526880100
ՀՎՀՀ 01223338	ՀՎՀՀ 49557658
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
<< 25>> ապրիլի 2017թ. կնքված
N << ԴԱՀԿ-ՇՀԾՁԲ-15/9-17/1 >> գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1	2	3	4		6	7
Հ/Հ	Գնման առարկայի անվանումը		Տեխիկական բնութագիրը		Ծառայության գինը /ՀՀ դրամ/	Չափաբաժնի գինը (գինը ներկայացվում է սյունակ 2-ում նշված գնման առարկայի համար) /ՀՀ դրամ/
1	Սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայություններ	Սերվերի սպասարկում և վերանորոգում	Սերվերի,դիագնոստիկա,պրոֆիլակտիկա,բոլոր տեսակի օպերացիոն համակարգի և գործիքային ծրագրերի տեղադրում, ընդհանուր սպասարկում ,կարգաբերում, վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը չվերանորոգման դեպքում փոխարինում նորով պահեստամասերով:Սերվերային տեխնիկան համալրված են հետևյալ սերվերներով (Dell Power Edge R905,Dell equallogic PS6010, Dell Power Edge R810, HP Compaq ML350, Hp Proliant ML350, Dell Power Edge 1900, Supermicro,Asus Z97, Asus X99) :	300 հատ	1050000 (մեկ միլիոն հիսուն հազար)	9000000 (ինը միլիոն) ՀՀ դրամ
		Համակարգչի սպասարկում և վերանորոգում	Համակարգիչների ծրագրային սպասարկում , վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը ,համակարգչային տեխնիկան համալրված է հետևյալ պահեստամասերով (ՀԴԴ 500 ԳԲ, ՀԴԴ 1 ՏԲ ,ՀԴԴ 2 ՏԲ , RAM DDR 1,DDR2,DDR 3,DDR 4,սնուցման բլոկ 550w, 650w ,մայրական սալիկ H-61, H-81 ,775 socket, SVGA 1GB, 2GB, CPU Core i3, Core i5, G1820, G3220 , DVD-RW և այլն)	300 հատ	1050000 (մեկ միլիոն հիսուն հազար)	

			պահեստամասերի չվերանորոգման դեպքում փոխարինում նորով:			
		Դյուրակիր համակարգչի /notebook/ վերանորոգում և սապաս արկում	HP, DELL,Toshiba նոթբուքերի,դիագնոստիկա,պրոֆիլակտիկա,բոլոր տեսակի օպերացիոն համակարգերի տեղադրում, վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը ,չվերանորոգման դեպքում փոխարինում նորով::	150 հատ	150000 (մեկ հարյուր հիսուն հազար)	
		Համակարգչի մոնիտորի վերանորոգում	HP,Dell,Samsung ,LG մոնիտորների,դիագնոստիակ,պրոֆիլակտիկա, վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը չվերանորոգման դեպքում փոխարինում նորով:	100 հատ	100000 (մեկ հարյուր հազար)	
		Համակարգչի անխափան սնուցման սարքի /UPS/ վերանորոգում	APC, Mercury ,powercom անխափան սնուցման սարքի,դիագնոստկա,պրոֆիլակտիկա, վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը չվերանորոգման դեպքում փոխարինում նորով:	300 հատ	300000 (երեք հարյուր հազար)	
		Սկաների վերանորոգում	HP,Canon ,Xerox ,Samsung,Lexmark սկաներների,դիագնոստիկա,պրոֆիլակտիկա, վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը չվերանորոգման դեպքում փոխարինում նորով:	50 հատ	50000 (հիսուն հազար)	
		Լազերային տպիչի (HP,Canon,) քարտրիջի լիցքավորում	Կատարողը պետք է իրականացնի HP,Canon քարթրիջների լիցքավորում և վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը(տոներ, թմբուկ,կառատրոն,ռաքել ,դոզատոր,մագնիսական գլան, չիպ) ,չվերանորոգման դեպքում փոխարինում նոր քարթրիջով	3500 հատ	2800000 (երկու միլիոն ութ հարյուր հազար)	
		Լազերային տպիչի (Samsung,	Կատարողը պետք է իրականացնի Samsung, Xerox քարթրիջների լիցքավորում և վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը	1500 հատ	750000 (յոթ հարյուր հիսուն	

		Xerox ,) քարտրիջի լիցքավորում	(տոներ,թմբուկ,կառատրոն,ռաքել ,դոզատոր,մագնիսական գլան, չիպ) ,չվերանորոգման դեպքում փոխարինում նոր քարթրիջով):		հազար)	
		Լազերային տպիչի Lexmark, Brother ,) քարտրիջի լիցքավորում	Կատարողը պետք է իրականացնի Lexmark,Brother քարթրիջների լիցքավորում և վերանորոգում ներառյալ բոլոր պահեստամասերը (տոներ, թմբուկ,կառատրոն,ռաքել ,դոզատոր,մագնիսական գլան, չիպ) ,չվերանորոգման դեպքում փոխարինում նոր քարթրիջով	1500 հատ	750000 (յոթ հարյուր հիսուն հազար)	
		Լազերային տպիչի (HP,Canon,) վերանորոգում	**Կատարողը պետք է իրականացնի HP,Canon տպիչների,դիագնոստիկա, վերանորոգում,պրոֆիլակտիկ մաքրում և սպասարկում ներառյալ բոլոր պահեստամասերը(ջերմոժապավեն,ռետինե լիսեռ,ատամնանիվ ,վառարան,ֆորմատոր,լազերթղթի քաշող հարթակ,մայրական սալիկ և այլն) վառարանի,ֆորմատորի,լազերի չվերանորոգման դեպքում փոխարինում նորով:**	1000 հատ	500000 (հինգ հարյուր հազար)	
		Լազերային տպիչի (Samsung, Xerox ,) վերանորոգում	Կատարողը պետք է իրականացնի Samsung, Xerox տպիչների, դիագնոստիկա, վերանորոգում,պրոֆիլակտիկ մաքրում և սպասարկում ներառյալ բոլոր պահեստամասերը(ջերմոժապավեն ,ռետինե լիսեռ,տեֆլոնե լիսեռ, ատամնանիվ ,վառարան,ֆորմատոր,լազերթղթի քաշող հարթակ,մայրական սալիկ և այլն) վառարանի,ֆորմատորի,լազերի չվերանորոգման դեպքում փոխարինում նորով	500 հատ	250000 (երկու հարյուր հիսուն հազար)	
		Լազերային տպիչի Lexmark Brother ,) վերանոր	Կատարողը պետք է իրականացնի Lexmark Brother տպիչների, դիագնոստիկա, վերանորոգում,պրոֆիլակտիկ մաքրում և սպասարկում ներառյալ բոլոր պահեստամասերը(ջերմոժապավե	100 հատ	100 000 (մեկ հարյուր հազար)	

		ոգում	ն,ռետինե լիսեռ, տեֆլոնե լիսեռ, ատամնանիվ ,վառարան,ֆորմատոր,լազերթղթի քաշող հարթակ,մայրական սալիկ և այլն) վառարանի,ֆորմատորի,լազերի չվերանորոգման դեպքում փոխարինում նորով:			
		Պատճեն ահանող սարքի լիցքավորում	HP,Canon,Xerox,Samsung,Laxmark ,Kyocera, Konika Minolta պաճենահանող սարքերի լիցքավորում ներառյալ տոները և չիպը:	1000 հատ	500000 (հինգ հարյուր հազար)	
		Պատճեն ահանող սարքի (HP,Canon)վերանորոգում	Կատարողը պետք է իրականացնի HP,Canon, դիագնոստիկա, պաճենահանող սարքերի վերանորոգում,պրոֆիլակտիկ մաքրում և սպասարկում ներառյալ բոլոր պահեստամասերը(ջերմոժապավեն , ռետինե լիսեռ, տեֆլոնե լիսեռ, ֆետրովի լիսեռ, դեվելոպեր, թմբուկ, կառատոռն, ռաքել,քաշող հարթակ,վառարան,վառարանի լամպի,կառատրոնի բլոկի, ատամնանիվ, լազեր,ֆորմատոր և այլն):Վառարանի, դեվելեպերի, ֆորմատորի, լազերի ,մայրական սալիկի չվերանորոգման դեպքում փոխարինում նորով:	500 հատ	250000 (երկու հարյուր հիսուն հազար)	
		Պատճեն ահանող սարքի (Xerox ,samsung ,Lexmark)վերանորոգում	Կատարողը պետք է իրականացնի ,Xerox ,samsung ,Lexmark, դիագնոստիկա, պաճենահանող սարքերի վերանորոգում,պրոֆիլակտիկ մաքրում և սպասարկում ներառյալ բոլոր պահեստամասերը(ջերմոժապավեն , ռետինե լիսեռ, տեֆլոնե լիսեռ, ֆետրովի լիսեռ, դեվելոպեր, թմբուկ, կառատոռն, ռաքել,քաշող հարթակ,վառարան,վառարանի լամպի, ատամնանիվ լազեր,ֆորմատոր և այլն):Վառարանի, դեվելեպերի, ֆորմատորի, լազերի ,մայրական սալիկի չվերանորոգման դեպքում փոխարինում նորով:	500 հատ	250000 (երկու հարյուր հիսուն հազար)	

		Պատճենահանող սարքի (Kyocera, Konika Minolta,Brother)վերանորոգում	Կատարողը պետք է իրականացնի , Kyocera,Konika Minolta,Brother պաճենահանող սարքերի ,դիագնոստիկա,վերանորոգում,պրոֆիլակտիկ մաքրում և սպասարկում ներառյալ բոլոր պահեստամասերը(ջերմոժապավեն , ռետինե լիսեռ, տեֆլոնե լիսեռ, ֆետրովի լիսեռ, դեվելոպեր, թմբուկ, կառատոռն, ռաքել,քաշող հարթակ,վառարան, վառարանի լամպի ,ատամնանիվ լազեր,ֆորմատոր և այլն):Վառարանի, դեվելեպերի, ֆորմատորի, լազերի ,մայրական սալիկի չվերանորոգման դեպքում փոխարինում նորով	300 հատ	150 000 (մեկ հարյուր հիսուն հազար)	
Ծառայության մատուցման ժամկետներ						
Սկիզբ՝ պայմանագրի կնքման օր				**Ավարտ՝ 25.12.2017թ.:**		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ ապահովող ծառայություն
Ք. Երևան, Հալաբյան 41/ա
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011288025
ՀՎՀՀ 01223338

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Անուշ Պետրոսյան
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 5
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570004526880100
ՀՎՀՀ 49557658

(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
<< 25>> ապրիլի 2017թ. կնքված
N << ԴԱՀԿ-ՇՀԾՁԲ-15/9-17/1 >> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2017թ. պետական բյուջեի միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	**Սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայություններ**	-	-	-	**3185000**	**3185000**	**3185000**	**5460000**	**5460000**	**5460000**	**9000000**	**9000000**	**9000000**	**9000000 (ինը միլիոն)**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով՝ ՀՀ դրամով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ
ապահովող ծառայություն
Ք. Երևան, Հալաբյան 41/ա
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական
վարչություն
Հ/Հ 900011288025
ՀՎՀՀ 01223338

(ստորագրություն)
L.S.

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ Անուշ Պետրոսյան
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 5
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570004526880100
ՀՎՀՀ 49557658

(ստորագրություն)
L.S.

Հավելված 3
<< 25>> ապրիլի 2017թ. կնքված
N << ԴԱՀԿ-ՇՀԾՁԲ-15/9-17/1 >> գնման պայմանագրի

Պատվիրատու

ՀՀ արդարադատության նախարարության ԴԱՀԿ
ապահովող ծառայություն
Ք. Երևան, Հալաբյան 41/ա
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011288025
ՀՎՀՀ 01223338

Պայմանագրի կողմ
Ա/Ձ Անուշ Պետրոսյան
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 5
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 1570004526880100
ՀՎՀՀ 49557658

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ պետության կարիքների համար սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների մատուցում
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ **«25» «_ապրիլի_» 2017թ.**
Պայմանագրի համարը՝ **ԴԱՀԿ-ՇՀԾՁԲ-15/9-17/1**

Պատվիրատուն՝ ի դեմս Արմեն Գևորգյանի և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
<< 25>> ապրիլի 2017թ. կնքված
N << ԴԱՀԿ-ՇՀԾՁԲ-15/9-17/1 >> գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության** աշխատակազմի(այսուհետ՝ Պատվիրատու) և **Ա/Ձ Անուշ Պետրոսյան-ի** (այսուհետ՝ Կատարող) միջև 2017թ. ապրիլի «25» -ին կնքված << **ԴԱՀԿ-ՇՀԾՁԲ-15/9-17/1**>> գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն